

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՐԿԱՅԻՆ
 ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2011-2013 ԹԹ.**

Հ/հ	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Կատարման վերջնա- ժամկետը	Ծանոթություն
	1	2	3	4
I. Հարկերի կամավոր վճարում (ինքնագնահատում)				
1.	Հարկային մարմնի կողմից մատուցվող էլեկտրոնային ծառայությունների ծավալների և տեսակների ավելացում	Հարկային մարմին-հարկ վճարող շփումների կրճատում, հարկային մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում և փորձագետների ներգրավում
2.	Էլեկտրոնային հաշվետվության համակարգի ընդլայնում բոլոր ԱԱՀ վճարողների վրա	Հարկային հաշվետվությունների ներկայացման և մշակման արդյունավետության բարձրացում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
3.	Էլեկտրոնային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար պայմանների ապահովում, այդ թվում՝ բոլոր հարկային հաշվետվական տեսակների ավտոմատացում	Հարկային հաշվետվությունների ներկայացման և մշակման արդյունավետության բարձրացում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
4.	ՀՀ բոլոր մարզկենտրոններում հարկ վճարողների սպասարկման կենտրոնների գործարկում, հաշվետվությունների աստիճանական անցում ամբողջական էլեկտրոնային համակարգի	Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների ծավալների ավելացում և դրանց որակի բարձրացում, էլեկտրոնային հաշվետվությունների ամբողջական	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում

		համակարգի ներդրում		
5.	Հարկ վճարողների սպասարկմանն օժանդակելուն ուղղված հեռախոսազանգերի ժամանակակից կենտրոնի (Call Center) գործարկում՝ մատուցվող ծառայությունների հետագա կատարելագործմամբ	Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում, արագ արձագանքի և հետադարձ կապի ապահովում	2011թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
6.	Էլեկտրոնային մեդիահոլովակների պատրաստում՝ հարկային օրենսդրության մատչելի մատուցման նպատակով, ինչը կներառի պատկերավոր օրինակներ հարկ վճարողների առանձին խմբերի համար	Հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
7.	Հարկ վճարողների սպասարկման միասնական ստանդարտների կիրարկում և կատարելագործում	Հարկ վճարողներին սպասարկման միասնական ծառայությունների մատուցում	2013թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
8.	Հարկային մարմիններում փաստաթղթաշրջանառության կրճատում	Վարչարարական խոչընդոտների վերացում, օրենսդրության պահանջների պահպանման հետ կապված ծախսերի նվազեցում հարկ վճարողի և հարկային մարմնի համար	2013թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
9.	Բարեխիղճ հարկ վճարողների ընտրության համակարգերի վերաբերյալ միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրություն և ՀՀ-ում ներդրման վերաբերյալ առաջարկությունների մշակում	Բարեխիղճ հարկ վճարողների համար առավել պարզեցված ընթացակարգերի սահմանում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
10.	Միկրո, փոքր և միջին ձեռնարկատիրության հարկման մեխանիզմների ուսումնասիրություն և կատարելագործման ուղղությամբ	Տնտեսավարող սուբյեկտների հարկման մեխանիզմների կատարելագործում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	առաջարկությունների մշակում			
II. Եկամուտների ապահովում և հարկադիր գանձում				
11.	Հարկային մարմնի ղեկավարի՝ հարկային մարմնի առաքելությունների, ծրագրերի և խնդիրների վերաբերյալ ամենամյա ուղերձների հրապարակում	Գործարար հանրության իրազեկում՝ հարկային վարչարարության զարգացումների վերաբերյալ	յուրաքանչյուր տարի	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
12.	Զկատարված հարկային պարտավորությունների աճի և նոր ապառքների կուտակման ռիսկերի կանխարգելում	Հարկային պարտավորությունների մարման գործընթացի բարելավում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
13.	Անհուսալի հարկային ապառքների դուրսգրման գործընթացի իրականացում	Հարկային պարտավորությունների մարման գործընթացի բարելավում, հարկային ապառքների և հաշվարկված տույժերի նվազեցում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
14.	Հարկերի հաշվանցման էլեկտրոնային համակարգի ամբողջականացում, գերավճարների հաշվին հարկային և մաքսային պարտավորությունների դիմաց հաշվանցման ընթացակարգերի սահմանում, ինչպես նաև դրան ուղղված օրենսդրության համապատասխան փոփոխությունների մշակում	Գերավճարների և փաստացի վճարումների հաշվին հարկային, մաքսային և սոցիալական ապահովության վճարների պարտավորությունների դիմաց (և հակառակը) հաշվանցման իրականացման մեխանիզմների կիրառում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
15.	ՀՀ-ում ապրանքաշրջանառության նկատմամբ հսկողության կատարելագործում	Փաստացի ապրանքաշրջանառության և իրացման ծավալների բացահայտում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
III. Կառուցվածք և կազմակերպում				
16.	Վերադաս և տարածքային հարկային	Հարկային մարմինների կառուցվածքի	շարունակական	լրացուցիչ

	մարմինների կառուցվածքային բարեփոխումներ	կատարելագործում, կառուցվածքային գործառույթների և կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետության գնահատման չափորոշիչների օպտիմալացում		Ֆինանսավորում չի պահանջվում
17.	Հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառման նպատակով համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների մշակում	Հարկային վարչարարության ընթացակարգերի կիրառման միասնականության ապահովում	շարունակական	պահանջում է լրացուցիչ ֆինանսավորում և փորձագետների ներգրավում
18.	Միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային մարմնի հիմնական բիզնես գործընթացների վերակազմակերպման և ավտոմատացման ծրագրի նախագծում և իրականացում	Միջազգային լավագույն փորձի համապատասխան բիզնես գործընթացների ներդրում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
19.	ՀՀ ԿԱ ՊԵԿ (հարկային) վարչարարության ռազմավարության 2012-2014թթ. եռամյա ծրագրի մշակում	Առաջիկա երեք տարիներին հարկային վարչարարության բարեփոխումների հիմնական ուղղությունների սահմանում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
20.	Միջազգային առաջավոր փորձի հիման վրա հարկային մարմնում ներքին աուդիտի նոր, ամբողջական համակարգի ներդրում և կատարելագործում	Հարկային ծառայությունում մարդկային ռեսուրսների կառավարման արդյունավետության, անձնակազմի կարգապահության բարձրացում, կայուն և հետևողական գործելակերպի խրախուսում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
IV. Հարկային օրենսդրություն				
21.	ԵՄ երկրների հարկային օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերի, հարկատեսակների և դրանց կառուցվածքի ուսումնասիրություն և	Միջազգային լավագույն փորձի հիման վրա հարկային օրենսդրության կատարելագործում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	առաջարկությունների մշակում			
22.	Տրանսֆերային գնագոյացման խնդիրների ուսումնասիրություն և ՏՀԶԿ (OECD) չափանիշներին համապատասխանող օրենսդրության մշակում	Տրանսֆերային գնագոյացման խնդիրների կանոնակարգում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
23.	Հարկային օրենսդրության համապատասխանեցում ԵՄ չափանիշներին	Հարկային օրենսդրության ներդաշնակեցում միջազգային լավագույն փորձին	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
24.	Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ծրագրային ներդրումն ապահովող ընթացակարգերի սահմանում, ուսումնամեթոդական նյութերի մշակում և ուսուցանում	Ապահովել եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման արդյունավետորեն գործող համակարգ	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
25.	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում անհատական հաշվի բացման գործընթացի կարգավորում	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի մասով օրենքների պահանջների կիրարկման ապահովում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
26.	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում ապահովադիրների վերաբերյալ տվյալների հրապարակման գործընթացի կարգավորում	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի մասով օրենքների պահանջների կիրարկման ապահովում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
27.	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից կատարման ենթակա միջոցառումների շարունակական իրագործում	Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի մասով օրենքների պահանջների կիրարկման ապահովում	2013թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
28.	ԵՄ անդամ երկրների հետ կրկնակի հարկումը	Օտարերկրյա հարկային մարմինների հետ	շարունակական	լրացուցիչ

	բացառելու մասին համաձայնագրերի ցանցի ընդլայնում	համագործակցության ապահովում		Ֆինանսավորում չի պահանջվում
29.	<p>Հարկային օրենսդրության փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հետ կապված հարցերով տնտեսավարող սուբյեկտներին պարզաբանումներ ներկայացնելու նպատակով պարբերաբար սեմինարների, կլոր սեղանների և խորհրդատվությունների կազմակերպում և անցկացում</p>	<p>Հարկային օրենսդրության փոփոխությունների և օրենսդրության կիրարկման հարցերի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում</p>	<p>շարունակական</p>	<p>պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում</p>
V. Տեղեկատվական տեխնոլոգիաներ				
30.	<p>Հարկային մարմնի էլեկտրոնային կառավարման համակարգի («Հարկատու-3») համալրում նոր մոդուլներով, այդ թվում.</p> <ul style="list-style-type: none"> - ստանդարտ հաշվետվությունների ավելացում, նոր հաշվետվությունների ներդրում, - անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային վարում, - ստուգման ակտերի էլեկտրոնային լրացում, - երրորդ անձանց տվյալների մշակում, - կամերալ (գրասենյակային) ուսումնասիրությունների ավտոմատացում, - դրամարկղային մեքենաների, գրանցման գրքերի, դրամարկղային գրքերի հաշվառման ավտոմատացված վարում, - մարդկային ռեսուրսների կառավարման և կատարողականի գնահատման ավտոմատացում, - հարկ վճարողի ամփոփ դաբան, 	<p>Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում</p>	<p>2012թ.</p>	<p>պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում</p>

	<ul style="list-style-type: none"> - խաչաձև ստուգումների համակարգ և արդյունքների մասին ծանուցումների ստեղծման համակարգ, - էլեկտրոնային հիշեցում-ծանուցումների ցանկերի ստեղծման, կառավարման, որոնման, տպագրման, արտածման համակարգ, - վարչական իրավախախտումների տեղեկատվության մուտքագրման, որոնման, դիտման համակարգ, - իրավախախտումների հաշվառում, հայցային աշխատանքների կազմակերպում, հարկադիր գանձումների և հարկ վճարողին ծանուցումների ավտոմատացված ներկայացում, - էլեկտրոնային եղանակով հարկային մարմին հաշվետվությունների ներկայացման համակարգի ընդլայնում, - արտոնագրային վճարների համակարգ, - հաշվետվությունների գրանցամատյանի վարման համակարգ, - ակցիզային դրոշմանիշների, դրոշմապիտակների (պիտակների) մեքենայացված հաշվառման համակարգ 			
31.	Հարկային մարմնի SUԿ (սերվերային սենյակ) ստեղծում	Արդիական SUԿ-ի ստեղծում, որը կապահովի էլեկտրոնային համակարգերի անխափան աշխատանքը, կհամապատասխանի միջազգային չափանիշներին և կունենա համապատասխան հզորություններ	Ֆինանսա-վորումից 9 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում

		բավարարելու ՀՀ ԿԱ ՊԵԿ պահանջները առաջիկա 4-5 տարիների համար		
32.	Էլեկտրոնային արխիվի համակարգի ստեղծում	Հարկ վճարողների կողմից ստացված թղթային փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների պահպանման ապահովում	Ֆինանսավորումից 18 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
33.	Տեղեկատվական գործընթացների շարունակականության կառավարման ներդրում	Հարկային մարմնի էլեկտրոնային համակարգերի անխափան աշխատանքի ապահովում՝ հիմնական ՏՄԿ-ում վթարի դեպքում	2011թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
34.	Հարկային մարմնի ներքին ցանցի վերազինում և արդիականացում	Տեղեկատվական հոսքերի կառավարման հնարավորությամբ կենտրոնացված համակարգչային ցանցի առկայություն	2011թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
35.	Էլեկտրոնային վճարումների համակարգի ներդրում	Էլեկտրոնային հաշվետվությունների հանձնման համակարգի միջոցով վճարումներ կատարելու հնարավորության ստեղծում հարկ վճարողների համար, որի շնորհիվ հարկային մարմինները կունենան ավելի հստակ տեղեկատվություն կատարված վճարումների մասին	Ֆինանսավորումից 9 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
36.	ՏՏ համակարգերի ներքին աուդիտի ներդրում	Հարկային մարմնի էլեկտրոնային համակարգերի ներքին աուդիտի գործընթացների, հաճախականության, պատասխանատուների և այլ բաղադրիչների պատշաճ կանոնակարգում	Ֆինանսավորումից 6 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
37.	ԱյՓի հեռախոսակապի ներդրում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ում	Հարկային մարմնում միջբաղադրային, միջազգային և մայրաքաղաքային զանգերի	Ֆինանսավորումից 3 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ

		ծախսերի կրճատում		Ֆինանսավորում
38.	Տվյալների մշակման միասնական շտեմարանի (Data Warehouse) ստեղծում, ներառյալ՝ նախագծումը և տարբեր համակարգերից տվյալների տեղափոխումը	Տվյալների շտեմարանի ստեղծում, որը կօգտագործվի վերլուծական հաշվետվությունների կազմման համար	Ֆինանսավորումից 6 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
39.	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի համակարգիչների փոխարինում դյուրակիր համակարգիչներով (thin client),	Հարկային մարմնի համակարգչային տեխնիկայի սպասարկման գների նվազեցում և դյուրակիր համակարգիչներից օգտվողների սպասարկման ժամանակի կրճատում	Ֆինանսավորումից 6 ամիս հետո	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
40.	Հարկային մարմնի տվյալների շտեմարանի լիցենզավորում	ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգերին անհրաժեշտ տվյալների շտեմարանների լիցենզիաների ձեռքբերում	2011թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
VI. Հարկային հսկողություն				
41.	Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) ամբողջական ներդրում, թեստավորում և գործարկում	Համատարած հարկային ստուգումների պրակտիկայից անցում թիրախային ստուգումների համակարգի	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
42.	Հարկային ստուգումների կազմակերպման գործընթացի կատարելագործում	Հարկային ստուգումների բնագավառում միջազգային առաջավոր փորձի համապատասխան կատարելագործված ընթացակարգերի կիրառում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
43.	Հարկային ստուգումների արդյունավետության մոնիթորինգի իրականացում	Հարկային ստուգումների արդյունքների պարբերաբար գնահատումների հնարավորության ստեղծում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
44.	Հարկային գերավճարների վերադարձման	Հարկային գերավճարների, այդ թվում ԱԱՀ-ի	2011թ.	լրացուցիչ

	դյուրացված (ավտոմատացված) համակարգի գործարկում	գերավճարների, ավտոմատացված կառավարման համակարգի առկայություն		Ֆինանսավորում չի պահանջվում
45.	Կամերալ (գրասենյակային) հսկողության (ուսումնասիրությունների) ավտոմատացում	Կամերալ ուսումնասիրությունների ամբողջ գործընթացի ավտոմատացում և շրջանակների ընդլայնում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
46.	Հարկային վարչարարման տեսանկյունից ռիսկային ոլորտներին պատկանող գործունեության տեսակների առանձնացում և դրանց հսկման մեխանիզմների ապահովում	Ռիսկերի գնահատման վրա հիմնված հարկային հսկողության համակարգի կատարելագործում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
47.	Հարկային մարմնի կողմից հսկողական գործառույթներ իրականացնելիս առավել հաճախակի թույլ տրվող սխալների տեղեկատվի գործարկում	Առավել հաճախ թույլ տրվող սխալների վերաբերյալ հարկային ծառայողների իրազեկվածության բարձրացում, հարկ վճարողների մոտ չկանխամտածված սխալների կանխարգելում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
VII. Մարդկային ռեսուրսների կառավարում				
48.	Հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերի սահմանում	Հարկային ծառայողների իրավունքների և պարտականությունների, տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար սահմանված պահանջների արձանագրում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
49.	Հարկային ծառայության վերլուծական-հետազոտական կարողությունների ուժեղացում՝ ստեղծելով առանձին ենթաձևեր համապատասխան բաղադրիչներով, ինչպես նաև ապահովելով «գիտելիքի փոխանցումը» ըստ վերլուծության գործառույթ ունեցող բոլոր ստորաբաժանումների	Վերլուծական հետազոտական կարողությունների ընդլայնում, հարկային վարչարարության շրջանակներում իրականացվող վերլուծությունների որակի բարձրացում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում և փորձագետների ներգրավում

50.	Հարկային ծառայողների առաջխաղացման համակարգի ներդրում և խրախուսման համակարգի գործարկում	Հարկային ծառայողների արհեստավարժության և աշխատանքի արդյունքների բարձրացման նկատմամբ խթանների ապահովում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
51.	Հարկային ծառայողների աշխատանքի վարձատրության և սոցիալական պաշտպանվածության կատարելագործման ուղղությամբ առաջարկությունների մշակում	Հարկային ծառայողների եկամուտների աճ և սոցիալական պաշտպանվածության բարելավում, ինչը նպաստելու է նաև կոռուպցիոն ռիսկերի սահմանափակմանը	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
52.	Հարկային ծառայողների աշխատանքային պայմանների բարելավում, ծառայողական անհրաժեշտ տեխնիկայով, տրանսպորտային միջոցներով և գույքով ապահովում	Հարկային ծառայողների աշխատանքային պայմանների համապատասխանեցումը աշխատանքի արդյունավետության նկատմամբ բարձրացող պահանջներին	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
53.	Հարկային ծառայողների համար նախապատրաստական, վերապատրաստման և փորձի փոխանակման ուսումնական միջոցառումների համապարփակ ծրագրի մշակում և իրագործում՝ ելնելով ոլորտային և գործառության առանձնահատկություններից, ինչպես նաև միջազգային առաջատար փորձից	Հարկային մարմինների խնդիրներին համապատասխան՝ հարկային ծառայողների գիտելիքների և հմտությունների անհրաժեշտ մակարդակի, հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառման ապահովում	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում և փորձագետների ներգրավում
54.	Հարկային ծառայողների վերապատրաստում միջազգային կազմակերպությունների (OECD, IMF, IOTA) հարկային ուսումնական հաստատություններում	Հարկային ծառայողների վերապատրաստում միջազգային չափանիշներին համապատասխան, միջազգային լավագույն փորձի փոխանակման ապահովում, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի ինտեգրում միջազգային հարկային ուսումնական համակարգերին	2013թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
55.	ԵՄ անդամ երկրների հետ փոխադարձ կապերի	Միջազգային լավագույն փորձի	2013թ.	լրացուցիչ

	հաստատում, համաժողովների և դասընթացների անցկացում	փոխանակության ապահովում		Ֆինանսավորում չի պահանջվում
56.	Հարկային ծառայողների ընթացիկ ուսումնական և իրազեկման միջոցառումների կազմակերպման համար Երևանում ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի գործարկում	Հարկային ծառայողների պատշաճ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
57.	Հարկային ծառայողների երկարաժամկետ ուսումնական միջոցառումների կազմակերպման համար Դիլիջանում ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնի գործարկում	Հարկային ծառայողների պատշաճ ուսուցման համար անհրաժեշտ պայմանների ապահովում, անձնակազմի մասնագիտական պատրաստվածության բարձրացում	2012թ.	պահանջվում է լրացուցիչ ֆինանսավորում
58.	Հարկային մարմիններում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունների ծրագրի մշակում և իրականացում	Հարկային մարմնում կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելում, հարկային ծառայողների վարքագծի կանոնների պահպանման նկատմամբ հսկողության ապահովում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
VIII. Հարկային խարդախություններից և հարկումից խուսափման դեմ պայքար				
59.	ՀՀ քրեական օրենսգրքի տնտեսական բնույթի հանցագործություններին վերաբերող մի շարք հոդվածներում քրեական պատժամիջոցներին զուգահեռ այլընտրանքային (ֆինանսական) պատասխանատվության միջոցների կիրառման ուսումնասիրություն և համապատասխան օրինագծի մշակում	Քրեական բնույթի տնտեսական հանցագործությունների ժամանակ պետական բյուջեի շահերին պատճառված վնասի հատուցման մեխանիզմի սահմանում	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
60.	Հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմը վերհանելու և տնտեսական	Հարկային հանցագործությունների քննության ընթացքում կոռուպցիայի հանցակազմի վերհանման և տնտեսական	2011թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

	հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու մեթոդների և ընթացակարգերի ներդրում	հանցագործությունների և կոռուպցիոն իրավախախտումների կապերը բացահայտելու միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և ներքին և (կամ) քննություն իրականացնող այլ մարմինների հետ համատեղ ընթացակարգերի սահմանում		
61.	Չկատարված հարկային պարտավորությունների ապահովման նպատակով հարկային մարմնի կողմից արգելադրման ինստիտուտի նոր համակարգի կիրառում, ցեսիայի և ժամանակացույցերի ինստիտուտների ներդրում	Չկատարված հարկային պարտավորությունների ապահովման ընթացակարգի սահմանում օրենքի դրույթներով (ՀՀ սահմանադրական դրույթ), արգելադրման առավել օպերատիվ մեխանիզմների կիրառում, պարտապան հարկ վճարողների հետ վարչարարական աշխատանքների իրականացում՝ նրանց կողմից պարտավորությունների կատարումն ապահովելու և դրանց կատարմանը նպաստելու նպատակով	համապատասխան օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ 2-րդ եռամսյակ	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
62.	Հարկային հանցագործությունների և խախտումների դեմ պայքարի ոլորտում ԵՄ պրակտիկայի ուսումնասիրում և լավագույն փորձի ներդրում	Հարկային հանցավորության դեմ պայքարի ուժեղացում	2012թ.	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
IX. Հաղորդակցություն				
63.	Հասարակության լայն խավերի իրազեկում և ծանոթացում հարկային վարչարարության առաքելությանը, հիմնական նպատակներին և իրականացվելիք միջոցառումներին	Թափանցիկ աշխատանքի և վստահության մթնոլորտի ձևավորում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

64.	Հարկային մարմինների կողմից զանգվածային լրատվության միջոցների հետ արդյունավետ շփումների ապահովում	Հասարակության և զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության բարելավում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
65.	Հարկային ծառայության ինտերնետային կայքէջի կատարելագործում	Հարկային ծառայության գործունեության թափանցիկության ապահովում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
66.	Հարկային ծառայողների կողմից կատարված օրինախախտումների դեպքերով ծառայողական քննությունների արդյունավետության բարձրացում և հրապարակայնության ապահովում	Հասարակության և զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցության բարելավում	շարունակական	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում
X. Այլ				
67.	2011-2013թթ. հարկային բարեփոխումների ծրագրի միջոցառումներից բխող գործողությունների ժամանակացույցի մշակում	Ծրագրով սահմանված միջոցառումների իրագործման ապահովում	ծրագրի հաստատումից հետո՝ մեկամսյա ժամկետում	լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում

**ՀՀ Նախագահի աշխատակազմի
ղեկավար**

Կ. Կարապետյան